

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՊԷՏՔ Է ՏՂԱՅ ՈՒ ԱՂԶԻԿ ՄԻԱՍԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԻՆ
ԵՒ ՈՒՍԱՆԻՆ.

Է. ՄՕՅԼԼԱՍ և Է. ԹՈՒԼԻ.

I.

Ի՞նչ ծագումն ունի արդի կրթական սիսեմը:
Ի՞նչպէս ե՞ն առաջացել մեր այժմեան դպրոցները:

Սովորաբար ընդունուած է պնդել, թէ տղայ, աղջիկներին անջատ դպրոցներում ուսուցանելու սովորոյթը նոյնքան հին է, որքան ինքը ուսումը: Բայց այդ մեծ սխալ է: Անջատ ուսուցանելու սխառեմը հին սովորոյթ չէ, այլ միջնադարեան նորմուծում: Դասական ազգերը այդպիսի բան ամենեւին չգիտէին: Պրօֆեսոր Դիլլը շատ հիմնաւոր կերպով բացայայտում է, որ Յունաստանի և Հռոմի դպրոցներում սղաները նստում էին աղջիկների կողքին և միասին էին սովորում Հոմերոսն ու Հեզիոդը: Երբ վայրենիների արշաւանքի ժամանակ Հռոմէական կայսրութիւնն ընկաւ և նրա աւերակների վրայ քրիստոնէական եւրոպան հիմնուեց, ուսումն ու կրթութիւնն ամբողջովին անցան կաթոլիկ եկեղեցու ձեռքը: Այդ ժամանակի գոյութիւն ունեցող բոլոր դպրոցները պատկանում էին զանազան կրօնական կարգերի: Ով որ կամենար այդ ատեն սովորել, թէկուզ այբուբէն, ստիպուած էր դիմել օգնութեանը քահանայի կամ կրօնաւորի:

Համալսարանները կառավարում ու ղեկավարում էին նոյն հոգեւորականները և այդ հիմնարկութիւններին վերաբերեալ բոլոր հարցերը վճռում էին ըստ կաթոլիկ եկեղեցու հրամանագրութեանց: Դաստիարակութիւնը մինչ այն աստիճան գտնուում էր հոգեւորականութեան ձեռքին, ամբողջ միջին դարերի ընթացքում, որ ամենափոքր գրագիտութիւնը մարդու, համարում էր պարզ ապացոյց, որ նա պատկանում է հոգեւորականութեան կամ կրօնաւորական որեւէ ուխտի. և այդ հանգամանքը զնում էր նրան հոգեւոր իշխանութեան հովանու տակ: Յանցագործը կարող էր կալանաւորուել, դատուել և մահուան դատապարտուել, բայց և

այնպէս, եթէ նա գիտէր կարգալ գոնէ մի տող լատիներէն, եւրոպայի ծառաները խլում էին նրան նոյն իսկ դահճի ձեռքից, պահանջում էին իբրեւ եկեղեցու սպասաւորի և եկեղեցական դատին յանձնում, և ուրիշ ինչ էլ որ պատահելու լինէր նրան, բայց և այնպէս նա ազատուում էր մահապատժի վտանգից և մարմնի որևէ մասի խեղանգամ կտրումից: Այդպէս էր «հոգևորականութեան արտօնութիւնը», որը խանգարել չէին համարձակում ամենահզօր թագաւորներն անգամ, վախենալով եկեղեցու բանադրանքից այս կեանքում և յաւիտենական կորուստից այն աշխարհում:

Որովհետև միակ ուսուցիչները այդ ժամանակ հոգևորականներն էին, որոնք պարտաւոր էին ողջ կեանքի ընթացքում պահել կուսակրօնութեան ուխտը, դրա համար այդ կրօնաւորներն ու կրօնաւորուհիները, բոլորովին բնականօրէն, սահմանափակում էին իրենց դաստիարակութիւնը միայն իրենց սեռակից անհատներով: Այստեղից առաջացաւ սովորոյթ՝ դպրոցներում զատել տղաներին աղջիկներից, մի սովորոյթ, որն իր բոլոր ֆեոսակար հետևանքներով պահպանուում է մինչև մեր օրերը:

Բեֆօրմացիան, որ այնքան շատ բաներ փոխեց, ամենևին ձեռնամուխ չեղաւ կրթութեան այդ կողմին: Վանքերը վերացուեցին, դրանց բնակիչներին ցրեցին, եկամուտները դրաւեցին: Մի մասը այն խոշոր գումարների, որ ստացուեց այդ վանքերից, գործադրուեց կլասիքական գիմնազիոններ հիմնելուն և պահպանմանը: Սակայն հէնց սկզբից այդ գիմնազիոններն իրենց ձեռքն առան բացառապէս տղամարդիկ: Կանանց թոյլ չէր տրուում ոչ իբրեւ ուսուցիչ և ոչ իբրեւ ուսանող: Մեզ հասել են տեղեկութիւններ մի քանի վարձացած կանանց մասին, Տուրոնների օրօք. Եղիսաբէթ թագուհին և Լեդի Չէյն Գրէյ նշանաւոր լատինագէտներ էին, թէպէտ դրանք ամենևին այնպիսի ականաւոր գիտնական կանայք չեն եղել, ինչպէս նրանց մասին շարադրում են մի քանի պատմագիրներ: Բայց այդ և դրանց նման կանայք բաղդաւոր բացառութիւններ են կազմում, և լինելով հարուստ, լուսաւոր իշխանների զաւակներ, հնարաւորութիւն ունէին օգտուելու իրենց համար առանձնապէս հրաւիրուած ուսուցիչների դասերից: Իսկ, ընդհանրապէս, աղջիկներին բացարձակ ոչինչ չէին ուսուցանում, բացի կարգալ-գրելը: Այն ատենի ընդհանուր հայեացքը, կնոջ կոչման մասին, ցայտուն կերպով արտայայտուում է Շէքսպիրը, Եագոյի բերանով.—

«Կանայք իրենց ստինքով կերակրում են յիմարներին ու յիմարուհիներին և եփում են զարեջուր»:

Եւ այն դաստիարակութիւնը, որ տրւում էր նրանց, դարմանալի կերպով լաւ յարմարեցրած էր, պատրաստելու նրանց յե-

տագայ պարապմունքների համար:

Նոր կլասիք դպրոցներն ևս դարձան բացառիկ սեփականութիւն տղաների, և դրանց հիմնադիրները, ըստ երեւոյթին, ամենին չէին գիտակցում, որպիսի չարիք են դրանով գործում: Սովորոյթը փոխակերպուեց ամրակուռ աւանդութեան. և մարդիկ, սովոր այնքան երկար տեսնել, ինչպէս տղայ, աղջիկ դաստիարակւում են անշատ դպրոցներում, սկսեցին ընդունել այդ ոչ միայն բնական այլ և անհրաժեշտ: Սակայն այդօրինակ առանձնացման ազդեցութիւնը ծայրայեղ ցաւալի էր: Եթէ տղաների կեանքը այդ դպրոցներում դարձաւ կոպիտ, շարժաձևերը անճոռնի, իսկ կարգապահութիւնը վայրագ, ապա այդ անխուսափելի էր, իբրև հետևանք քնքոյշ սեռի հեռացման, նրանց զբաղմունքներին մասնակցելուց: Եւս առաւել ճակատագրական ազդեցութիւն ունեցաւ այդ սխտեմը աղջիկների դաստիարակութեան վրայ: Գրեթէ ամբողջ երեք հարիւրամեակ կանայք, խիստ հպուստիտ բաղդաւոր բացառութեամբ, բոլորովին զրկուած էին ամեն մի ուսումից, որ այդ անունը կրելու արժանի լինէր: Հետևանքում ստացուեց—աննկարագրելի անբարոյականացումը ամբողջ հասարակութեան, լիտի արհամարհանքը դէպի կինը, արտայայտուած ժամանակի գրականութեան մէջ և կատարելագոյն բացակայութիւնը որ և է թարմացնող հասարակական կարծիքի:

Յետոյ, վերջապէս, տասնիններորդ դարի կէսերին մօտ, շարժում յառաջացաւ յօգուտ կանանց բարձրագոյն ուսման, որին գլուխ կանգնեց Զօն Ստիւարդ Միլլը: Դժբաղդաբար այդ շարժման պաշտպանները, վհատած այն հանգամանքից, որ իրենց հակառակորդները կրթական աշխարհի բարձրագոյն ներկայացուցիչներն էին, ներկայացրին խիստ չափաւոր պահանջներ: Այդ բարենորոգիչները շատնում էին նրանով, որ պահանջում էին—աւելի լաւ ուսում տալ աղջիկներին նրանց դպրոցներում և իրաւունք—համալսարան մտնելու: Դիւսաւոր չարիքին նրանք ձեռ չտուին: Ո՛չ մէկը նրանցից չէր երազում անգամ, այն իսկական լուրջ յեղաշրջման մասին, որը վերաբերում էր տղայ, աղջիկների միատեղ ուսուցմանը, բոլոր դպրոցական հաստատութիւններում: Իւրաքանչիւր քայլն այդ ուղղութեամբ արւում էր աստիճանաբար, դանդաղ և տանջող, երկար ու զօրեղ մաքառման դնով: Հնագոյն համալսարանները, վերջապէս, երկարատեւ վէճերից ու կշռադատումներից յետոյ, վճռեցին բանալ իրենց դռները կանանց առաջ և թոյլ տալ նրանց դասախօսութիւններին ու հարցաքննութիւններին, տղամարդկանց հետ միատեղ: Թէպէտ Օքսֆորդի ու Քէմբրիջի համալսարանները շարունակում են, նոյն իսկ մինչև մեր օրերը, չընդունել կանանց աշխատութիւնները զանազան գի-

տական աստիճանների ու պարզւելների մրցակցութեանը: Նոր շարժումը, սակայն, ըստ առաջնոյն, ձեռնամուխ չեղաւ ժողովրդական դպրոցներին, որոնք կառչած այն աւանդին, որն ասում է՝ «Այն ինչ որ եղած է, պէտք է յաւիտեան մնայ», շարունակում էին յամառօրէն իրենց դռները փակի տակ պահել, վախենալով կանանց ներխուժումից:

Շնորհիւ միայն ամերիքական դպրոցների օրինակին և փորձին, որտեղ արդէն մի քանի սերունդներ, տղայ ու աղջիկ ուսանում են ընդհանուր դասարաններում, միևնոյն դասաւանդների դեմքով արութեան տակ, մի քանի խոհուն հետազոտողներ սկսեցին հաւատալ, որ խառն սխառեմը օգուտով կարելի է մտցնել և Անգլիայում: Ընթերցողները, անծանօթ միացեալ հասանդների կրթական դրութեանը, գուցէ զարմանան, երբ խն թէ հանրապետութեան քաղաքացիների հինգ վեցերորդականը ուսել է խառն դրութեանը: Այդ դեռ քիչ է. այդպիսի երկար և լայնատարած փորձից յետոյ, ամերիքական կառավարութիւնը իւր տարէհաշիւներում ուշադիր ու խիստ կշռելով ամեն բան, դրականապէս արտայայտում է յօդուտ առաւելութեան այդպիսի միացեալ ուսման և նրա ծաւալման: Միացեալ ուսուցումը տղայ, աղջիկների Ամերիքայում արտասովոր յաջողութիւն ունեցաւ:

Ունեւնք արդեօք մենք նոյնպիսի հիմքեր, զո՞ւ լինելու մեր արդի սխառեմի հետեանքներից: Մենք արդէն ցոյց տուինք, որ տղայ, աղջիկներին անջատ դպրոցներում ուսուցանելու սովորոյթը ոչ միայն հուսի որ և է խելացի, բնական հիմք, նոյն իսկ չի առաջացել հնութիւնից, այլ մտցուեց միջին դարերում, շնորհիւ այն հանգամանքի, որ այդ ատեն ուսումը գտնուում էր կրօնաւորների ձեռքում: Աւելի քան հազար տարուայ շրջանում, երկու սեռերը խիստ բաժանուած էին ուսուցման ամբողջ ընթացքում: Այն ըստէից, երբ տղայ, աղջիկ թողնում էին մանկանոցը, մինչև այն օրը, երբ նրանք ոտք էին դնում, իբրև հասուն մարդիկ, համայնական կեանքը, նրանց դաստիարակում և ուսուցանում էին անջատ:

Մենք կամենում ենք քննել այստեղ անջատ դաստիարակման մի քանի ազդեցութիւնները, որպէս զի ընթերցողը հնարաւորութիւն ունենայ վճռել, որքան ցանկալի է շարունակելը ուսուցման այդ սխառեմը:

Այդ քննութեան մէջ մենք խնամքով կաշխատենք լինել ընդհանրական անաչառ: Իւրաքանչիւր ընթերցող միջոց կունենայ հեշտութեամբ ստուգել մեր բերած փաստերն ու ապացոյցները: Միացեալ ուսուցման առաւելութիւնները, մեր կարծիքով խիստ մեծ են և լուրջ ու կարօտ չեն ոչ մի չափազանցման:

II.

Գոհացուցիչ են մեր արդի դպրոցները.

Անգլիական դպրոցական սիստեմը իրենով ներկայացնում է համայնական կեանքի կողմերից մէկը, որով նրանք իբրև ազգ, խորը հիմք ունին պարձենալու: Մայր ցամաքային երկրների երեխաները, գուցէ, ստանում են լայն գրքային գիտութիւն, բայց մտաւոր հոգեկան ու մարմնական զարգացման գործում, որը և կազմում է կրթութեան իսկական առարկան, Անգլիան հեշտութեամբ բռնում է առաջին տեղը, գեղեցիկ ընկերական կեանքը այդ դպրոցներում, առողջ խաղերը, գործադրող աղատութեան յաջող զուգաւորումը կարգապահութեան հետ, ներկայացնում են այնպիսի գծեր անգլիական դաստիարակութեան, որպիսիք դուք իդուր պիտի որոնէք Ֆրանս ու գերմանական գիմնազիոններում և լսարաններում: Ո՛չ Ֆրանսիացին և ոչ գերմանը չեն կարող յիշել այն տարիների մասին, որ նրանք անց են կացրել մոռյալ, ինչպէս բանտը, սեմինարիաներում, այնպիսի քնքոյշ ամսասանքի հրճուանքով, որպիսին զգում է անգլիացին, յիշելով իւր աւելի բաղդաւոր աշակերտական տարիները: Պատմում են մի երիտասարդ սպայի մասին, մեռած իզանդիստւում, որն սպանուեց հէնց այն րոպէին, երբ դառնալով իր ընկերոջը բացականչում էր— «Երթանք, Բրաուն, և թող ծագկի՛ Իտոնը—մեզ դաստիարակող դպրոցը, մենք պէտք է առաջին շարքերում լինինք»: Եւ այդ դէպքը կենդանի օրինակն է հպարտութեան և սիրոյ, որ ներշնչում են անգլիական դպրոցները այն մարդկանց, որոնք իրենց կրթութիւնը այնտեղ են ստացել: Որքան փառաւոր յուշեր են դարձեցնում անգլիական մեծ ժողովրդական դպրոցների անունները. զրանք բուժարաններ են եղած այնպիսի մեծաքանակ ամենալաւ և խոշորագոյն մարդկանց, որ նրանց փառքը իրապէս «ազգային հպարտութիւն» է: Եւ պակաս նշանաւոր մասնաւոր դրպրոցներն ևս որոշ աստիճան օգտւում են նոյն սիրով, իրենց նախկին սաների կողմից, իսկ երբեմն նոյն իսկ աւելի մեծ, երբ այդ հաստատութիւնների աւելի սահմանափակ չափերը տանում են առաւել մօտիկ, սեղմ յարաբերութեան դասատուների և աշակերտների մէջ:

Անգլիական դպրոցական սիստեմը, այդքան լաւ յարմարեցրած շատ կողմերով, այդպիսի խորը կնիք դնող կրթող սերնդի վրայ, այնուամենայնիւ ունի մի ճակատագրական պակասութիւն, որը մենք արդէն ցոյց տուինք: Կանանց հեռացումը, իբրև ընկերուհիներ ու վարժուհիներ և վերջնական զրկումը տղաներին, մանկութեան առաջին տարիներից, ընտանիքի, բարքերը փափ-

կացնող, ազդեցութիւնից, խոշոր բացն է կազմում այդ սխտեմի, մնացած բոլոր կողմերով լիովին գեղեցիկ կազմակերպուած:

Ուշադրութեան արէք այն յանկարծական փոփոխութիւնը, որ պիտին կրում է երեխան, երբ, ապրելով մինչև ինն կամ տասը տարեկանը, քաղաքում, ընտանիքի շրջանում, քոյրերի մէջ, ծնողներին արթուն հոգացման տակ, յանկարծ մտնում է միջնաշակարգ դպրոցի լայն աշխարհը և կամ ստորին ժողովրդական դպրոցը: Այստեղ, հարադատների քնքոյշ հոգատարութեան փոխարէն, մշտադրադ ուսուցիչը հազիւ կարողանում է նուիրել նրան մի յիմներորդական մասը իր ժամանակի և ուշադրութեան, իսկ պանսիօնի տանտիկիներ հազիւ կարող է բաժին հանել նրան չնչին մասը իր փաղաքշանքների, որոնք նա մասնատրելու է նրա մնացած ընկերներին: Այդ, չափազանց ծանր զրկանքների զնով նա պէտք է ձեռք բերի մեծաքանակ դասական գիտելիքներ կամ մեծ ֆիզիքական ոյժ և ճարպիկութիւն: Զրկել երեխային այդ քնքոյշ հոգատարութիւնից և փաղաքշանքից նշանակում է փչացնել նրանց բնաւորութիւնը, դարձնել այդ աւելի կոպիտ և օտարացնել նրանց ծնողներից մի միջոցով, որը ոչ մի յետագայ քաղաքակրթութեամբ չի կարելի ուղղել:

Բացակայութիւնը կանացի ընկերութեան և կնոջ ազդեցութեան տանում է դեռ աւելի ևս լուրջ հետեանքների, քան այդ օտարացումը որդոց՝ ծնողներից, որքան էլ վշտալի լինի այդ օտարացումը: Ամենատեսակ ջանքերի հետ, մեր ամենաանձնուէր և խանդավառ ուսուցիչների, այնուամենայնիւ նկատում է որոշ կոպտութիւն մտքի և վարքի, այն բոլոր դպրոցներում, ուր չկան կանայք: Այդպիսի դպրոցներում դաստիարակութիւնը, այս խօսքի իսկական իմաստով, այսինքն մեր բնոյթի լաւագոյն և ամենաբարձրագոյն կողմերի զարգացման մտքով, բոլորովին անհնարին է: Մի քանի բնածին առաքինութիւններ կարօտ են մշակուել, բայց մաքրութիւնը, անմեղութիւնը, համեստութիւնը, քնքոյշութիւնը ցնդում են այդ, նրանց անհարազատ մթնոլորդից:

Մենք գերազանցօրէն գիտակցում ենք, որ մեր դպրոցներում տիրող մթնոլորդը, անհամեմատ լաւ է քան հարիւր տարի, ութսուն և նոյն իսկ յիսուն տարի առաջ: Բայց մինչև այն օրը, քանի մենք կը կառնենք անհեթեթ սովորոյթին—անջատել մեր տղաներին աղջիկներից, հէնց այն հասակում, երբ նրանց ազդեցութիւնը միմեանց վրայ ամենաբարեբարն է, մինչ այդ ժամանակ, դժբաղդաբար մենք կընդհատուենք այնպիսի երևոյթների, որպիսիք այժմ սովորական են, ինչպէս մի ժողովրդական դպրոցի աշակերտ անձնասպանութեան մէջ գտաւ փրկութիւն, իրեն չտրող ընկերների հետապնդումներից:

Եւ որքան էլ բացառիկ լինեն սոյնանման դէպքերը, դրանք այնուամենայնիւ Հափազանց պարզ ցոյց են տալիս այն կոպտութիւնը, որպիսուն ընդունակ են տղաները, Հստնձայարուած քնքոյշ սեռի ներկայութեամբ:

Սակայն այդ ֆիզիքական կոպտութիւնը չէ միակ և ոչ ամենավատ Հարիքը, այլանդակող մեր դպրոցը: Իւրաքանչիւր անձն, քիչ թէ շատ ծանօթ մեր դպրոցներին, ընդհարուած է զանազան դէպքերի և միջոցների, որոնց օգնութեամբ աւելի փոքր տղաները կարող են անբարոյականանալ մեծ ընկերներից, նրանցից աւելի փչացածներից: Դա շատ տանջող ու ծանր երեոյթ է, բայց անօգուտ է բացասել այն իրական փաստերը, որոնց պատճառով շատ ազնիւ բնութիւններ ապականուած են և շատ մատաղ կեանքեր կործանուած, երբ մեծ քանակութեամբ տղաներ խոնւում են միատեղ, մի տեսչի անուանական հսկողութեան տակ: Այդպիսի պայմաններում բաւական է մի քոսոտ ոչխարը, որպէսզի վարակէ ամբողջ հօտը: Մենք չենք ցանկանում արտայայտուել Հափազանց թունդ բառերով, թէպէտ հազիւ գտնուի բուսականաչափ անեղ խօսք, նշանակելու այն սխտեմը, որն առաջնորդում է յաճախ դէպի նման վշտալի հետեանքները: Ձերկնչելով լուրջ հակաճառութիւններից, մենք համարձակ հաստատում ենք, ամբողջ Անդլիայում չի գտնուի մի դպրոցի աւագ, որին ամենեկին դէպք եղած չլինէր ընդհարուել այն Հարիքին, որը մենք այստեղ մատնանշեցինք:

Այդպիսի վատ ազդեցութիւնների վտանգն է, որ ստիպում է շատ ծնողների գերադասել ընտանեկան ուսուցումն ու դաստիարակումը իրենց տղայ, աղջիկների, Հնայելով դրա շատ անձեռնտու կողմերին: Սակայն համեմատաբար միայն շատ քիչ ծնողներ հնարաւորութիւն ունին վարձատրել դասերը իսկական լաւ ուսուցիչներին, իսկ ևս առաւել քչերը կգտնուին այնպիսիներ, որոնք կարողանային փոխարինել դասատուներին:

Բացի դրանից, չպէտք է աչքաթող անել և այս փաստը: Այն երիտասարդները, որոնք մանկութիւնից մինչև հասունութիւնը կրթուել են քնքոյշ ընտանեկան շրջանում, հակամէտ են տարբերուելու այնպիսի, աւելի բնածին առաքինութիւնների պակասութեամբ, որպիսիք աւելի լաւ են բարձրաւճում աղատ օդում արտաքին աշխարհի Քաջութիւնը, արիւթիւնը, ինքնուրոյնութիւնը և ինքնօրնութիւնը սակաւ ուժեղ են զարգանում այն տղաների մէջ, որոնք ամբողջ կեանքը անց են կացնում ընտանական յարկի վահանի տակ: Դպրոցում, ընդհանուր ընկերական կեանքի ազդեցութիւնը զարգացնում է մանկան մէջ առանձնայատուկ քաղաքացիական առաքինութիւններ: Տղան պարտաւոր է

ընտելանալ — յարգելու իրաւունքն ու կարծիքները այլոց: Մինչեւ անգամ խաղահրապարակների ազմկալի կեանքը կարեւոր տարր է կազմում կրթութեան: Այն պատանին, որ անթարթ չի կրում համարձակ գնդակի պատահական հարուածը կրիկեթ խաղի մէջ, կամ մի այլ սուր ցաւ խաղամրցումների ժամանակ, հազիւ պէտքական լինի կեանքի այն կռուին, որտեղ հանապազօր անխուսափելի է ընդհարումը աւելի ևս անախորժ պատահարներին: Դրա հետ միասին, ընկերութիւնը այլ երեխաների հետ ծառայում է իրրեւ միակ իրական նախազգոյշ, պաշտպանող միջոցը, եսական ու հիւանդոտ սնափառութիւնից, որն այնպէս ուժգին զարգացած է այն երեխաների մէջ, որոնք ընտելացած են իրենց համարելու ընտանեկան միջավայրի աստուածացման կենդրոնը: Բացառապէս մեծերի մէջ դաստիարակուած երեխան միշտ դուրս է գալիս մի քիչ փչացած:

Այնուամենայնիւ կ'սյ արդեօք հնարաւորութիւն գտնելու մի այնպիսի սիստեմ, որի մէջ միացուէին բոլոր առաւելութիւնները ինչպէս դպրոցական, այնպէս և ընտանեկան դաստիարակման: Կարո՞ղ ենք մենք տալ մեր մանուկներին փրկարար ազդեցութիւնը ամբողջ կենսակազմի, որը պատրաստելու է մարդիկ՝ ընդունակ արժանաւոր, օգտակար զեր խաղալու հասարակութեան մէջ, չգոհելով միաժամանակ այն, աւելի քնքոյշ, բայց ու սակաւ վսեմ առաքինութիւնները, որոնք սերտ կապուած են ընտանեկան կեանքի հետ:

Միացեալ կրթութեան պաշտպանները հաստատում են, որ այդ հնարաւոր է և արդէն ձեռք է բերւում այժմ իսկ ոչ միայն Միացեալ Նահանգներում, ուր այդ սիստեմը նոյնքան հին է, որքան ինքը երկիրը, այլ և Անգլիայի մի քանի դպրոցներում: Եւ ցանկացողները կարող են համոզուել, զիտելով այդ փորձի կիրարկումը գործնականում, ուսումնասիրելով դրա մեթոդներն ու ստացած հետեւանքները:

Լուռ և համարեա աննկատելի է սկսուել յեղաշրջումը, որը, մեր կարծիքով, հազար անգամ աւելի կարեւոր էր դառնալու, քան այլ ազմկոտ քաղաքական փոփոխութիւնները, որոնք գրաւում են դէպ իրենց նոյնպիսի ուժեղ ուշադրութիւն, որպէս շքեղ հրթիռը (фейерверк) և հետեւանքում նոյնքան քիչ օգտաբեր:

Հետեւեալ գլխում մենք մտադիր ենք տալու կարճ տեսութիւնը այդ շարժման Անգլիայում, իսկ յետագայ գլուխները կ'նուիրենք ուսումնասիրութեանը միացեալ կրթութեան ազդեցութեան, նախ ուսանողների բնաւորութեան և երկրորդ — հասարակութեան վրայ:

Փոխադր. Նրուանդ Բեն. Նալբանդեան